

Ռոման Ս. Մելիքյան
Քաղաքակ. գիյր. թեկնածու

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

Մուտք

Տեղեկատվական դարաշրջանում ժողովրդավարական բարեփոխումները բավականին բարդ բնույթ ունեն հատկապես կերպավորված հասարակությունների համար, որոնց ներսում գերակայում են տրոհված ու անհավասարաչափ տեղեկատվական հոսքերը և ապատեղեկատվության սպառնալիքների բավականին մեծ վտանգը: Այստեղ քաղաքացիական հասարակության կայացման գործում առավելագույնս կարևորվում է տեղեկատվական համակարգի նոր տեսակի՝ **համացանցային մեդիայի** դերը:

Այս համատեքստում տեղեկատվական տարածության և նոր տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ազդեցությունն էապես մեծանում է՝ զգալիորեն գերազանցելով իրենց գնահատման ու իմաստավորման գործընթացին: Արդյունքում՝ հատուկ կարևորություն է ստանում **համացանցային մեդիայի**¹ գնահատումն ու իմաստավորումը քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում²: Անհրաժեշտու-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.01.2013:

1 «Համացանցային մեդիա» («համացանցային լրատվամիջոց») եզրույթն առաջին անգամ սկսել են օգտագործել 20-րդ դարի վերջին՝ փոխներգործող (ինտերակտիվ) էլեկտրոնային լրատվամիջոցները և հոդվածագիրների կողմից տեղեկատվության օգտագործման նոր մեթոդները բնութագրելու համար, որոնք տարբերվում են ավանդական մեդիայից: Համացանցային մեդիայի և թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ՝ ավանդական մեդիայի կրողներին փոխարինելու եկան նորերը (համակարգչային և համացանցային կրողները): Արդյունքում՝ սկզբնական շրջանում համացանցային մեդիայի մեջ ներառվեցին **ձայնային և տեսաթվային կրողները, էլեկտրոնային գրքերը, համացանցային ՋԼՄ-ները, էլեկտրոնային խաղերը, էլեկտրոնային փոստային ծառայությունները, տեսաձայնային սկավառակները**: Տե՛ս Интернет-журналистика: Учеб. Пособие для студентов вузов, обучающихся по специальности 021400 «Журналистика». **А.А. Калмыков, Л. А. Коханова.** – М.: ЮНИТИДАНА, 2005, стр. 30–35; **Элльвуд Я.** 100 приемов эффективного брендинга. СПб.: Питер, 2002, с. 76–80.

2 Արդի քաղաքագիտության մեջ ընդունված է տարբերակել երկու տեսակի մեդիա կամ լրատվամիջոց՝ **ավանդական** (հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ) և **էլեկտրոնային** (սոցիալական ցանցեր, տեղեկատվական կայքեր, էլեկտրոնային մամուլ):

թյուն է առաջանում հիմնավորել համացանցային մեդիայի մեխանիզմների ճիշտ մշակումն ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև ուսումնասիրել և վերլուծել դրանց դրսևորման առանձնահատկությունները քաղաքացիական հասարակության կայացման գործում³: Հաշվի առնելով, որ գլոբալ ցանցային տեղեկատվայնացման պայմաններում տեղեկատվության հոսքերը կարող են վայրկենապես ընդլայնվել և թռիչք կատարել **կետային, թվային և ցանցային տարածություններում**⁴, որոնց ընթացքում աններդաշնակ ու կեղծ տեղեկատվությունը ի վիճակի է վնաս հասցնել տարբեր մակարդակի և նշանակության «տեղեկատվական օբյեկտներին», էլ ավելի է կարևորվում այս հիմնախնդրի ուսումնասիրության հրատապությունն ու արդիականությունը:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

1. Համացանցային մեդիան և քաղաքացիական հասարակությունը

Այսօր փաստորեն անհնար է պատկերացնել արդի մարտահրավերներին համահունչ քաղաքացիական հասարակության կայացումն առանց համացանցի և դրանում առկա լրատվամիջոցների դերակատարության: Համացանցային մեդիայի զարգացումը և վերջինիս հիման վրա քաղաքացիական հասարակության կայացումը կախված են մի շարք հանգամանքներից, որոնց շարքում որոշիչ դեր է խաղում ժողովրդավարության առկայությունը, ինչը նպաստում է համացանցում տեղեկատվության ազատ ստացմանն ու տարածմանը: Միաժամանակ համացանցային մեդիան՝ ինքը ներագդում է քաղաքացիների գիտակցության և քաղաքական կողմնորոշման բազմավեկտոր արժեքային համակարգի վրա՝ հնարավորություն տալով համապատասխան կերպով արձագանքել արդի մարտահրավերներին և դրանց հետևանքներին: Պատճառն այն է, որ համացանցային մեդիան էականորեն ընդարձակում է հաղորդակցության ձևերը և ալիքները՝ արդիականացնելով դրանց տեխնիկական հագեցվածությունը և հաղորդելով գաղափարական նոր որակ ու տրամադրություններ: Ընդ որում, արագ կապի հնարավորությունը՝ **տեսային և ձայնային ալիքների, տեքստային և գրաֆիկական նամակների** օգտագործմամբ, որակապես փոխում է անհատների և սոցիալական խմբերի շփումը քաղաքացիական հասարակությունում: Արդյունքում՝ համացանցային մեդիան օգտագործում են հաղորդակցության տարբեր ձևերի համար: Այն է՝ միջանձնային, խմբային, զանգվածային, անհատական, սոցիալական շահերի արտահայտում և պաշտպանություն, ինչն էլ ավելի է դյուրին դարձնում քաղաքացիների միջև շփումը և արդյունա-

2013
ապրիլ-հունիս, 2013
ապրիլ 2 (42)
փարի, թիվ 2 (42)
ԹԵՄ
ԿԻՄ
համահայկական հանդես

3 Ակներև է, որ Հայաստանի Հանրապետությունում հասարակության ժողովրդավարացման և իրավական պետության կառուցման խնդրի արդիականությունն ապացուցելու կարիք չկա: Հարցը միայն այն է, թե ինչպե՞ս պետք է կայանա քաղաքացիական հասարակությունը գլոբալ, լոկալ և տեղական մակարդակներում առկա տարաբնույթ մարտահրավերների և քաղաքական գարգացումների տիրույթում:

4 Տե՛ս **Трифлер, Э., Трифлер, X.** Революционное богатство = Revolutionary Wealth, 2006.—М.: АСТ, 2007, с. 78-80:

վետ քաղաքացիական գործունեություն ծավալելու հնարավորությունները:

Համացանցային մեդիայի շնորհիվ իշխանության և քաղաքացիական հասարակության երկխոսությունն անմիջականորեն նպաստում է քաղաքացիների ներգրավմանը որոշումների ընդունման գործընթացում, ինչն իր հերթին նպաստում է ժողովրդավարության զարգացմանը:

2. Համացանցային մեդիայի հիմնախնդիրները

20-րդ դարը մարդկության զարգացման համար հեղափոխական կարելի է անվանել առնվազն հեռահաղորդակցման միջոցների կտրուկ զարգացման առումով: Եթե դարասկզբին աշխարհը ցնցվեց հեռագրի օգտագործմամբ և առօրեականացված ռադիոհաղորդումներով, դարակեսին սովորական դարձավ հեռուստատեսությունը, ապա դարավերջին համացանցի զանգվածային հասանելիությունը կանխորոշեց 21-րդ դարի մարդու կենսակերպը և աշխարհի նորացվող կերտվածքը: Արդեն 21-րդ դարում համացանցի ցանցային տրամաբանությունն անպայման պետք է հանգեցնի փոխազդեցության մեծ հնարավորություններ ընձեռող գործիքների ստեղծմանը, ինչն էլ տեղի ունեցավ «Վեբ 2.0» (Web 2.0) սկզբունքի կիրառման շնորհիվ⁵: Շատ արագ ստեղծվեցին համացանցի օգտատերերին նախաձեռնողական մասնակցության և անիրական (վիրտուալ) փոխազդեցության հնարավորություն տվող հարթակներ, որոնցից հայտնի են հանրային խմբագրմամբ հանրագիտարանները, ֆորումները (Forums), բլոգները (Blogs) և սոցիալական ցանցերը (Social Networking): Սովորական անհատների ակտիվ մասնակցությունը համացանցային լրատվամիջոցի բովանդակության ստեղծման մեջ ցուցադրեց այդ հարթակների զանգվածային լրատվական գործառույթը, ինչը ստիպեց նրանց վերաբերվել իբրև համացանցային մեդիայի: Դրանից բխող ռիսկերն ու հնարավորությունները չեն դադարում հրատապ թեմա հանդիսանալուց: Հատկապես փակ հասարակություններով հայտնի երկրների ժամանակակից զանգվածային ընդվզումներում վերջիններիս դերի դիտարկումը (օրինակ՝ Թունիսի և Եգիպտոսի հեղափոխությունները) ոչ միայն քաղաքական, այլև լուրջ գիտական քննարկումների առարկա է դարձել:

Համացանցային մեդիայի, հատկապես աշխարհում զանգվածայնություն վայելող ֆեյսբուք (Facebook) և թվիթեր (Twitter) սոցիալական ցանցերի միջոցով հնչում են նաև թերահավատների պնդումները: Այսպես, օրինակ՝ «Ցանցային խաբկանք. համացանցային ազատության հակառակ կողմը» գրքի հեղինակ Եվգենի Մորոզովը⁶ շեշտում է, որ նոր տեխ-

5 Համակարգչային համակարգի ձևավորման մեթոդաբանությունը, որը համացանցային գործունեության արդյունքում արդյունավետություն է ապահովում, առավել տարածում է գտել «Վեբ 2.0» սկզբունքի միջոցով: Նրա առանձնահատկությունը տեղեկատվական բազայի առավել մեծ թվաքանակով օգտվողների որակական տվյալները բազմացնելու մեջ է: Տե՛ս **Марков Б.** Человек в эпоху масс-медиа // Информационное общество. – М.: АСТ, 2004, с. 462–507.

6 Տե՛ս **Morozov, Evgeny** (2011). The Net Delusion. London: Penguin Group. ISBN978-1-846-14353-3.

նույն ժամանակահատվածում ներուժը պարունակում է նաև ապաժողովրդավարացման սերմեր՝ հավելելով, որ բռնատիրական վարչակարգերն ընդդիմադիրներին հետապնդելու և պատժելու համար նույն սոցիալական ցանցերն են օգտագործում: Բացի այդ, ակնհայտ է, որ այդպիսի իշխանությունը հմտացել է համացանցի գրաքննության և վերահսկման ձևերի կիրառության մեջ՝ չեզոքացնելու համար դրա ազատականացման քայլերը (օրինակ՝ «ԴԴոՍ» (DDoS)) անվանումով համացանցային հարձակումներն անցանկալի օգտատերերից ազատվելու եղանակներից մեկն են դարձել):

Փորձագետ Արմինե Իշխանյանն իր «Ազատականացման տեխնոլոգիան. երազանքներ, քաղաքականություն, պատմություն» հոդվածում նշում է, որ լավատեսները շարունակում են պնդել, թե հետագա տեխնոլոգիական առաջընթացը կօգնի շրջանցել «Չինական մեծ պատը»⁷: Հետևաբար, համացանցային մեդիայի միջոցով տրվող հնարավորությունները, ինչպես նաև դրանց առջև ծառայած ռիսկերը դժվար է թերագնահատել կամ գերագնահատել՝ առանց հաշվի առնելու կոնկրետ երկրի սոցիալ-քաղաքական, տեխնոլոգիական, ժողովրդագրական և մի շարք այլ պայմաններ:

Նման խնդիրների գիտակցումը «Ֆրիդոմ Հաուզ» (Freedom House) միջազգային կազմակերպությանը դրդել է հաշվետվություն կազմել աշխարհի տարբեր երկրներում համացանցի և թվային մեդիայի գնահատման վերաբերյալ: Ըստ այդմ՝ 2011 թ. ապրիլի 18-ին հրատարակված «2011 թ. Ցանցային ազատություն. համացանցի և թվային մեդիայի գնահատումը» («Freedom of the Net 2011. A Global Assessment of Internet and Digital Media») զեկույցը նվիրված էր 37 երկրների գնահատմանը, որոնցում «Հայաստանը ներառված չէր և միայն առկա էր այն պնդմամբ, ըստ որի՝ ՋԼՄ-ներն անկախ չեն, իսկ ժողովրդավարության տեսանկյունից երկիրը մասամբ ազատ է»⁸:

Նման պայմաններում, գնահատելով Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման գործում համացանցային մեդիայի դերակատարման արժեքայնության մակարդակը, նպատակահարմար է ընդգծել, որ ներկայումս համացանցային մեդիայի՝ իբրև քաղաքացիական շահերի բարձրաձայնման և առաջխաղացման, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանման և ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցող գերակա լրատվամիջոցի շուրջ քննարկումներն ավելի համընդգրկուն են դառնում, հատկապես ավանդական և համացանցային մեդիայի մրցակցության բանավեճի տիրույթներում⁹:

Ավանդական մեդիան (հեռուստատեսությունը, ռադիոն, տպագիր մամուլը) ստիպված է հաշվի նստել համացանցային մեդիայի (տեղեկատ-

7 **Իշխանյան Ա.**, Ազատականացման տեխնոլոգիան. երազանքներ, քաղաքականություն, պատմություն. - <http://www.opendemocracy.net/armine-ishkanian/liberation-technology-dreams-politics-history>.
8 «Ֆրիդոմ Հաուզ» (Freedom House) միջազգային կազմակերպություն.-<http://www.freedom-house.org/country/armenia>.
9 Տե՛ս <http://newmedialine.blogspot.com/2011/02/blog-post.html>.

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (42) ԱՊՐԻԼ-ԽԱՆԻՍ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

վական կայքեր, սոցիալական ցանցեր) ոչ միայն առավել արագ և տեխնիկապես հարուստ բազային տեղեկատվության տրամադրման, այլև որոշ դեպքերում դրանց անփոխարինելիության փաստի հետ՝ փորձելով ավանդական ու համացանցային մեդիաների համակեցության ձևեր որոնել: Այն իր հերթին ստեղծում է նպաստավոր պայմաններ համացանցային ոլորտում առավել մրցակցային դաշտ ունենալու և ժողովրդավարական հիմքերի վրա նոր հասարակություն կերտելուն նպաստելու համար՝ ինչպես քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ամրապնդման, այնպես էլ նոր մարտահրավերներին ըստ արժանվույն պատասխանելու առումով: Արդյունքում՝ համացանցային մեդիայի շնորհիվ աճում է ավանդական մեդիաների ուշադրությունը տեղային բովանդակությամբ և անձնական բնույթի տեղեկատվության նկատմամբ՝ արդիականացնելով սոցիալական ցանցերի վերաբերյալ տեսությունները, օգտատերերի կողմից բարձրացված գերակտուալ թեմաները և քննարկման ուղղությունները:

3. Համացանցային մեդիայի հնարավորությունները ժողովրդավարության զարգացման համատեքստում

Հայաստանյան համացանցային մեդիան Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար ոչ միայն հավասար հնարավորություններ է ստեղծում՝ իրականացնելու իր սահմանադրական իրավունքները¹⁰, այլ նաև ապահովում է ազատ տեղեկատվահաղորդակցային դաշտ՝ ժողովրդավարության հիմքերի ամրապնդման համար: Համացանցային մեդիայում ջնջված են տեղեկատվության աղբյուրի և լսարանի սահմանները, որոնք գտնվում են հավասար հարթության վրա: Մա ամենալուրջ տարբերությունն է՝ ի համեմատ միակողմանի հեռարձակող ավանդական մեդիաների:

20-րդ դարի մեդիատեսաբան Մ. Մակլյունը գտնում էր, թե «հեռուստատեսությունն ապահովում է այն վստահությունը, որ մարդիկ այլևս չեն զրուցում միմյանց հետ, որ նրանք վերջնականորեն մեկուսացված են»¹¹: Համացանցային մեդիան ապահովում է այդ փոխադարձ կապը՝ հնարավորություն տալով տարանջատված զանգվածներին մերձեցման նոր և նախաձեռնողական մոտեցումներ ցուցաբերել: Եվ եթե հեռուստատեսության ֆենոմենը հանգեցրեց այն գաղափարին, որ աշխարհը նեղանում, վերածվում է «գլոբալ գյուղի», քանի որ վայրկյանների ընթացքում ցանկացած տեղեկատվություն կարելի է աշխարհի մի ծայրից մյուսը հասցնել, ապա համացանցային մեդիայի տված փոխազդման հնարավորությունը բերում է աշխարհը «գլոբալ շուկայի» վերածվելու մտքին, որտեղ քաղաքացիական հասարակության հիմնախնդիրները հանրության համար դառնում են ավելի հասանելի, թափանցիկ և քննարկելի, իսկ դրանց լուծման մեխանիզմներն ու ուղիները՝ ավելի արդիական և արդյունավետ:

10 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Գլուխ 2. - <https://www.e-gov.am/gov-decrees/item/18972/>.

11 **Маклюэн Г. М.** Понимание Медиа: Внешние расширения человека / Пер. с англ. **В. Николаева;** Закл. ст. **М. Вавилова.** — М.; Жуковский: «КАНОН-пресс-Ц», «Кучково поле», 2003, с. 78-79.

Այս ամենի արդյունքում վառ արտահայտված անհատականության սկզբունքը և ազատականությունը ժամանակի հետ իրենց տեղը կզիջեն ընդհանուր շահերով խմբային և համայնքային զգացողությունների բարձրացմանը: Համացանցային մեդիան կմեծացնի և արդեն մեծացնում է ցանցային կազմակերպման հնարավորությունները ոչ միայն անիրական (վիրտուալ), այլև իրական կյանքում: Այլ հարց է այդ խմբերի նպատակների իրացման իրական հնարավորությունը. դա անմիջականորեն կախված է տվյալ երկրի քաղաքական ռեժիմի կոշտ վարքագծի աստիճանից կամ զարգացման միտումներից: Ամեն դեպքում՝ որոշակի շահերի շուրջ միավորման պոտենցիալ ունեցող այս կամ այն չափով զանգվածային խմբերն ինքնակազմակերպման լայն հնարավորություններ են ձեռք բերում համացանցային մեդիայի շնորհիվ: Այն, իր հերթին, նվազագույն բարենպաստ սոցիալ-քաղաքական պայմաններում կարող է նպաստել տվյալ խմբերի դերի բարձրացմանը և որոշումների ընդունման գործընթացում կազմակերպված փոքրամասնությունների ներգրավվածությանը: Նշված «կիսաբաց երկրների» շարքում են, իհարկե, հետխորհրդայինները՝ ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, որտեղ արդեն իսկ կարելի է դիտարկել համացանցային մեդիայի օգնությամբ ձևավորվող՝ որոշակի շահերի ընդհանրությամբ խմբերի ինքնակազմակերպման միտումները:

4. Համացանցային մեդիայի հեռանկարները և նոր մարտահրավերները

Հայաստանում համացանցի ու համացանցային մեդիայի ընձեռած հնարավորությունները փորձում են կիրառել նախ և առաջ՝ քաղաքացիական դիրքորոշմամբ անհատները և դերակատարները: Սոցիալական ցանցերի օգտատերերի համախմբված գործողությունների արդյունքում գրանցվել են նույնիսկ կառավարության որոշումների վրա ազդեցության դրական նախադեպեր, որոնք թույլ են տալիս հուսալ, որ մեր երկրում համացանցի ու համացանցային մեդիայի տարածումը կարող է լուրջ խթան հանդիսանալ քաղաքացիական գիտակցության, պետական իստիտուտների և քաղաքացիական մշակույթի զարգացման համար:

Վերջին 10 տարիների ընթացքում զգալիորեն աճել է ՀՀ քաղաքացիների ակտիվությունը տարբեր սոցիալական ցանցերում, բլոգներում և համացանցային ֆորումներում: Օրինակ՝ բազմաթիվ խմբեր կան ֆեյսբուքում, որտեղ քննարկում են ամենատարբեր հարցեր՝ սկսած հայթույրական հարաբերություններից, վերջացրած Երևանի այգիներով ու պուրակներով: Ի վերջո, ֆեյսբուքում գրանցվելու համար հատուկ ջանքեր կամ ռեսուրսներ չեն պահանջվում: Ավելին, այն պարզապես անվճար և բոլորի համար մատչելի գերակտիվ հաղորդակցային միջոց է: Եվ դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ համացանցային մեդիայի գրավչությունն էլ ավելի է մեծանում, քանզի այն ավելի արագ է և գրեթե միշտ ծախս չի պահանջում:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ՃԵ) քարի, թիվ 2 (42) ասպիդ-հանիս, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

Հայաստանում վերջին տարիներին արձանագրվեց համացանցային հեղափոխություն: Շնորհիվ ագրեսիվ մրցակցության՝ մեկ տարվա ընթացքում համացանց կապի գներն ընկան միջինը մոտ 10 անգամ: Դրան զուգահեռ՝ կառավարության «Համակարգիչ բոլորին» ծրագիրը¹² խթանեց տեխնիկայի տարածմանը հանրապետությունով մեկ: Մասնավոր ձեռնարկությունները նույնպես սկսեցին վարկով համակարգիչ տրամադրել՝ ուժեղացնելով վիրտուալ ծառայությունների հնարավորությունները: Շարժական համացանց կապի զարգացումը հանգեցրեց նաև համացանցի ներթափանցմանը մարզեր: Նման զարգացումները բերեցին համացանցի ազդեցության աճին: Ներկայումս Հայաստանում համացանցը հիմնական տեղեկատվական աղբյուրներից մեկն է:

Բացի դրանից՝ սոցիալական ցանցերի ազդեցության աճի պատճառով համացանցն այսօր հանդիսանում է նաև քաղաքական ու քաղաքացիական ակտիվության հիմնական հարթակներից մեկը: Հայ բլոգերներն այսօր ընթերցողների քանակով չեն զիջում միջին հայկական առցանց լրատվամիջոցին: Ցանցային ակտիվիստները վաղուց դարձել են նյութալիքներ (լրատուներ), բլոգներում և սոցիալական ցանցերում նրանց գրառումները հաճախ մեջբերվում են ավանդական ԶԼՄ-ներում, պաշտոնյաները բլոգերներին հրավիրում են հանդիպումների: Սոցիալական ցանցերում օրերի և ժամերի ընթացքում ձևավորվող ակտիվիստների խմբերը երբեմն ավելի շատ գործ են անում, քան ավանդական հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները):

Հայաստանում 2012 թ. արձանագրված համացանցի աճը դրական ազդեցություն ունեցավ նաև բովանդակային առումով: Հիմնական օգտատեր-գանգվածին հասանելի դարձավ համացանց կապի այն արագությունը, որը թույլ է տալիս ոչ միայն սևեռվել տեքստային բովանդակության, այլ նաև լուսանկարների և տեսանյութերի վրա: Օրինակ՝ ըստ Յու-թյուբ (You tube) տեսանյութային վեր-կայքի՝ Հայաստանում տեսանյութերի դիտման միջին արագությունը վերջին մեկ տարվա մեջ մոտավորապես կրկնապատկվել է: Նման քանակական աճը հանգեցնում է որակական փոփոխությունների, քանի որ երկու կարևոր ուղղություններ զարգանալու հնարավորություն են ստացել:

Առաջինը համացանցային հեռուստատեսությունն է: Բացի իր արդիականությունից և այլ դրական տեխնիկական պահերից, այն ունի մի շատ կարևոր դրական հատկանիշ. բերում է հեռուստադաշտի ազատականացմանը: Բացի դրանից, համացանցային ակտիվիստները հնարավորություն են ստանում նվազագույն ֆինանսական ծախսերով ստեղծել իրական հեռուստատեսություն:

Երկրորդը համացանցային (էլեկտրոնային) մամուլն է: Այստեղ հարկ է արձանագրել, որ համացանցից օգտվողների թվաքանակի թռիչքային աճը հայկական տպագիր մամուլի նկատմամբ էական առաջընթաց արձանագրեց 2006-2009 թթ., երբ նկատվում էր, որ տպագիր մամուլը Հայաստանում աստիճանաբար «վախճան» է ապրում: Բացի որոշ ընթերցվող թերթերից, որոնց տպաքանակը գերազանցում էր 3-4 հազարը

12 Տե՛ս ՀՀ կառավարություն. – <https://www.e-gov.am/gov-decrees/item/18972/>.

(օրինակ՝ «Հայաստանի Հանրապետություն», «Հայկական ժամանակ»), հիմնական պարբերականները հազար օրինակի շուրջ էին գոյատևում: Գոյություն ունեին նաև թերթեր, որոնց տպաքանակն իջել էր մինչև մի քանի հարյուր օրինակի: Նույնիսկ ամենաընթերցվող թերթերը պարփակվել էին իրենց անփոփոխ լսարանով և աճի ներուժ այլևս չէր նկատվում, քանի որ տպագիր մամուլը կորցրել էր ոչ միայն ֆինանսական, այլև քաղաքական և հասարակական իմաստն ու նշանակությունը:

Սակայն համացանցի աճը և սոցիալական մեդիաների ներխուժումը լիովին վերաձևափոխեցին տեղեկատվական դաշտը: Տպագիր մամուլը երկրորդ կյանքի հնարավորություն ստացավ՝ ներխուժելով համացանց: Արդյունքում՝ թերթերի մեծ մասն այսօր ավելի շատ ընթերցվում է համացանցում, քան տպագիր վիճակում: Ակներև է նաև, որ սրանից տեղեկատվական դաշտում շահում են այն ավանդական ԶԼՄ-ները, որոնք ոչ միայն չեն անտեսում այլընտրանքային մեդիաները և չեն ընկալում դրանք որպես մրցակիցներ, այլև փորձում են համադրել ավանդական և այլընտրանքային մեդիաները: Այն ավանդական ԶԼՄ-ները, որոնք չեն հետևում նոր հնարավորությունների զարգացմանը, վաղ թե ուշ դուրս են մղվելու դաշտից: Իսկ համացանցային մեդիայի ազդեցությունը Հայաստանի իշխանության գործունեության վրա դեռևս դժվար է հաշվարկել: Բայց բոլոր դեպքերում՝ պետական ծառայողի կողմից իր դիրքի չարաշահման արդյունքում հանրային կարծիքը համացանցային տարածություններում վայրկյանների ընթացքում կարող է դառնալ հանրության սեփականություն: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ առաջիկայում համացանցային մեդիան էականորեն կարող է նպաստել Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացմանը, որովհետև համացանցային մեդիայի ձևավորման հետևանքով.

- տեղեկատվական դաշտում ավանդական ԶԼՄ-ներին զուգահեռ՝ ստեղծվել և արդեն գործում են այլընտրանքային աղբյուրներ, և եթե տպագիր թերթերն ունեն լավագույն դեպքում՝ տպաքանակի չնվազման միտում, ապա համացանցում գրեթե բոլոր ԶԼՄ-ների մոտ դիտվում է լսարանի կայուն աճ,

- փաստացի տեղեկատվական դաշտի զարգացումն այսօր տանում է դեպի ավանդական և այլընտրանքային մեդիաների համադրում, ուստի ավանդական ԶԼՄ-ները, որոնք չեն հետևում նոր հնարավորություններին, վաղ թե ուշ դուրս են մղվելու դաշտից,

- ավանդական մեդիան ֆինանսական կախվածության պատճառով աշխատելով ինչ-որ նեղ շահերի օգտին, չի կարող հակադրվել վերջիններիս, ուստիև չի կարող օբյեկտիվ լինել, իսկ համացանցային մեդիան և ընդհանրապես՝ նոր լրատվամիջոցները բոլորովին չեն թաքցնում իրենց սուբյեկտիվությունը, մինչդեռ ինչպես հայտնի է, **սուբյեկտիվության հանրագումարն օբյեկտիվությունն է,**

- ավանդական մեդիան ստիպված է հաշվի նստել համացանցային մեդիայի կողմից ոչ միայն առավել արագ և տեխնիկապես հարուստ բազային տեղեկատվության տրամադրման, այլև որոշ դեպքերում դրանց անփոխարինելիության փաստի հետ՝ փորձելով որոնել ավանդական ու

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (42) ԱՊՐԻԼ-ԻՄԱԻՍ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

համացանցային մեդիաների համակեցության ձևերը, ինչն, իր հերթին, ստեղծում է նպաստավոր պայմաններ համացանցային ոլորտում առավել մրցակցային դաշտ ունենալու և ժողովրդավարական հասարակություն կերտելու համար,

- համացանցային մեդիայի շնորհիվ Հայաստանում ծավալվող իշխանության և քաղաքացիական հասարակության երկխոսությունն օժանդակում է քաղաքացիների ներգրավմանը որոշումների ընդունման գործընթացի մեջ, ինչն իր հերթին նպաստում է ժողովրդավարության զարգացմանը,

- համացանցային մեդիան մեծ հնարավորություններ է բացում ոչ միայն գործունեության տարբեր ոլորտների համար, այլև դառնում է քաղաքացիների ապրելակերպի կարևոր բաղկացուցիչը:

Այս ամենը վկայում է, որ ներկայումս Հայաստանում հասարակությունն անցում է կատարում հաղորդակցության սկզբունքային նոր ձևի, նաև՝ քաղաքացիական հասարակության զարգացման որակական նոր մակարդակի, որի արդյունքները երևալու են մոտ ապագայում:

Summary

THE ROLE OF INTERNET MEDIA IN THE DEVELOPMENT OF CIVIL SOCIETY IN ARMENIA

Roman S. Melikyan

The article is devoted to the versatile study and system analysis of the Internet-Media. The structural and functional differences of Traditional and Modern Media are established and developed with individual theses and approaches. Internet-Media is considered in the context of the formation and development of Civil Society. Here we substantiate the vision that the role and importance of Internet-Media is irreplaceable for the availability of information, dissemination and development of democracy in the 21st century.